ակաց Միությունում

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 19-ին ավարտվեց միութենական ռեսպուբլիկաների գիտությունների ակադեմիաների գիտական գործունեության կոորդինացման խորհրդի սեսիան։ Սեսիայի աշխատանքին մասնակցեցին միութենական ռեսպուբլիկաների բոլոր գիտությունների ակադեմիաների ներկայացուցիչները։ Սեսիայի երեկոյան նիստում զեկուցումներ լսվեցին վեց ռեսպուբլիկական գիտությունների ակադեմիաների 1948 թ. գիտական աշխատանքների մասին։ Զեկուցումներով հանդես եկան Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ակադեմիկոս Վ. Գուլքանյանը, Ուզբեկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ակադեմ. Խ. Մ. Աբդուլաևը, Ղազախական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ ակադ. Կ. Ի. Սատպաևը, Լիտվական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի քարտուղար ակադ. Յա. Վ. Պեյվեն, Էստոնական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ՝ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Գ. Կրուումը, Լիտվական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ՝ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Յու. Յու. Մատուլիսը։

Զեկուցումների շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին սովետական ականավոր գիտնականներ, միութենական ռեսպուբլիկաների գիտությունների ակադեմիաների պրեզիդենտներ, վիցե-պրեզիդենտներ և ակադեմիկոս-քարտուղարներ։

Գիտական գործունեության կոորդինացման խորհրդի սեսիայի եզրափակիչ նիստում հանդես եկավ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Ս. Ի. Վավիլովը։ (ՏԱՍՍ)